# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«26» դեկտեմբերի 2025 թվականի N:790-Ա ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 66 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի և 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի, 34-րդ հոդվածի 1-4 մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2-րդ, 2.2-րդ, 6-րդ կետերի, որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկի Շիրակի մարզպետարանի ենթակայության դպրոցներ բաժնի 69-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 22-ի «ՀՀ Շիրակի մարզի մի շարք պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N 66 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սարատակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային

կազմակերպության կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սարատակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սարատակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության պետական գրանցումն օրենքով սահմանված կարգով իրականացնելու համար դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է